

**2808 «ՀԱԳՈՒՍՏԻ ՍՈՒԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
«ԳԾԱՆԿԱՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Բացատրագիր**

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքն է՝ *նատյուրմորտ հարթ ֆոնի վրա* 1 գիպսե երկրաչափական մարմնից, որևէ կենցաղային առարկայից և մեկ

թղթի վրա: Հանձնարարության կատարմանը տրվում է 4 ակադեմիական ժամ, որի ժամանակ բացահայտվում է դիմորդի կողմից նատյուրմորտի ճիշտ տեղադրումը թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտումը տրված լուսավորության պայմաններում, ծավալների ճիշտ արտահայտումը և բնօրինակի նմանության ապահովումը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքն է՝ *նատյուրմորտ հարթ ֆոնի վրա* 1 գիպսե երկրաչափական մարմնից, որևէ կենցաղային առարկայից և մեկ

թղթի վրա: Հանձնարարության կատարմանը տրվում է 4 ակադեմիական ժամ, որի ժամանակ բացահայտվում է դիմորդի կողմից նատյուրմորտի ճիշտ տեղադրումը թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտումը տրված լուսավորության պայմաններում, ծավալների ճիշտ արտահայտումը և բնօրինակի նմանության ապահովումը:

Գիմորդի կողմից կատարված քննական առաջադրանքը գնահատելիս հաշվի է առնվում.

- |  |            |
|--|------------|
| 1. Թղթի դիրքի ընտրությունը ըստ դիտման կետի, առարկաների հարաբերական տեղադրումը նրա մեջ    | 0-2 միավոր |
| 2. Առաջադրանքի կազմում եղած առարկաների և նրանց մասնիկների համաչափությունների արտահայտում | 0-2 միավոր |
| 3. Առաջադրանքի ընդհանուր բնութագրի արտահայտումը աշխատանքում                              | 0-3 միավոր |
| 4. Աշխատանքում եզրագծային խնդիրների լուծում  | 0-2 միավոր |
| 5. Աշխատանքում հեռանկարի արտահայտում (գծային-օդային)                                     | 0-3 միավոր |
| 6. Աշխատանքում լուսաստվերային և ծավալային խնդիրների լուծում                              | 0-3 միավոր |
| 7. Առաջադրանքը կազմող առարկաների նյութականության արտահայտումը                            | 0-3 միավոր |
| 8. Գրաֆիկական կատարողական կուլտուրան   | 0-2 միավոր |

---

**Ընդամենը 20 միավոր**

**2808 «ՀԱԳՈՒՄՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
«ԳԾԱՆԿԱՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

«Գծանկար» առարկայի քննությանը տրվում է 4 ակադեմիական ժամ:

Քննությանը ներկայանալիս դիմորդն իր հետ պետք է ունենա՝

1. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների;
2. Ռետին, սրիչ, կոճգամներ:

Քննության օրը դիմորդները քննասենյակներում իրենց տեղերը զբաղեցնում են քննական տոմսերի համարներին համապատասխան և որոշակի դիրքից կատարում հանձնարարականը: Քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում են և գնահատվում:

Գնահատման ավարտից հետո գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ, որից հետո հայտնվում դիմորդներին:

Գնահատականների բողոքարկումը կատարվում է ընդունելության կանոնակարգով:

***ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***